# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հուլիս, 2020 թվականի № 32-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի № 21-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) գործադիր տնօրենի կողմից 2020 թվականի հուլիսի 28-ին ներկայացված թիվ Ռ20 01-53 գրությունը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը  ո ր ո շ ու մ է.

1. Փոփոխել Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2020 թվականի հունիսի 30-ի № 21-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) № 3 հավելվածով հաստատված՝ Ընկերության ««Արևիկ» մայրաքաղաքային սփռման» ռադիոծրագրի՝ 2020 թվականի օգոստոսի 3-ից մինչև 2020 թվականի երկրորդ կիսամյակի ավարտը հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը՝ այն շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման № 1 հավելվածի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ս. ԶԱՔԱՐՅԱՆ

31 հուլիս, 2020 թվականի

ք. Երևան